

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ*

lusinevardanyan@litinst.sci.am

ORCID iD: 0009-0001-9731-7033

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-92

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱՅԱՆԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Բանալի բառեր – չափածո առակ, Ավետիք Իսահակյան, Առաքել Բաղիշեցի, Ֆրիկ, միջնադար:

Ամփոփում

Հոդվածում վերլուծված են Ավետիք Իսահակյանի արձակ և չափածո առակները, որոնք նա տպագրել է ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում՝ ամենավերջում անդադառնալով առակախոսի բանահյուսական կերպարին՝ այդպիսով մեկ անգամ ևս ընդգծելով գրական այս տեսակի կարևորությունն իր համար: Սուրբ Գրքից, հայ միջնադարյան առակագիրներից, մասնավորապես՝ Վարդան Այգեկցուց կամ ընդհանրապես հայ մատենագիրներից քաղված առակներն Իսահակյանի գրչի տակ յուրօրինակ մշակման են ենթարկվել, և դրանց ամբողջության դիտարկումը բանաձևային ճշգրտությամբ բացահայտում է գրողի աշխարհայացքը, նրա պատկերացումներն աշխարհակարգի, պետության կառավարման կամ կյանքի մասին ընդհանրապես: Նշված հանգամանքներով էլ հենց պայմանավորված է աշխատանքի *կարևորությունն ու արդիականությունը*: Հավելենք նաև, որ Ավ. Իսահակյանի առակների կենսունակության կարևոր վկայությունն է դրանց հաճախակի ընդգրկումը դպրոցական դասագրքերում, ինչը սույն ուսումնասիրության կարևորության և արդիականության հավելյալ ցուցիչ է:

Հոդվածի *գիտական նորույթը* դրանց բովանդակային վերլուծությունն է աշխարհակարգին վերաբերող և խոհափիլիսոփայական առակների բաժանմամբ՝ ի լրումն գրականագիտական մինչ այժմ եղած առավել ընդհանրական և գրապատմական վերլուծությունների: Այդ նպատակով կիրառել ենք պատմահամեմատական, տեքստային, կառուցվածքային վերլուծության *մեթոդները*: Եզրակացությունն այն է, որ առակը՝ որպես գրական տեսակ, հետաքրքրել է Ավ. Իսահակյանին իր ստեղծագոր-

ծական կյանքի ողջ ընթացքում: Առակի պարզության միջոցով նա իր ընթերցողին փորձել է առավել դյուրին հասցնել կյանքի իմաստը բացահայտող կարևորագույն և հավերժական ճշմարտությունները:

LUSINE VARDANYAN

PhD in Philology

Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA

lusinevardanyan@litinst.sci.am

ORCID iD: 0009-0001-9731-7033

AVETIK ISAHAKYAN'S FABLES

Key words: verse fable, Avetik Isahakyan, Arakel Bagishetsi, Frik, Middle Ages.

Abstract

The article analyzes Avetik Isahakyan's prose and verse fables, which he published throughout his entire creative life, returning in his final years to the folkloric figure of the fabulist—thereby once again emphasizing the significance of this literary genre for him. The fables drawn from the Holy Scripture, from medieval Armenian fabulists—particularly Vardan Aykegtsi—or, more generally, from Armenian manuscript tradition, undergo a distinctive artistic reworking in Isahakyan's hands, and their comprehensive examination reveals, with formulaic precision, the writer's worldview and his conceptions of the world order, state governance, or of life in general. These circumstances determine the *relevance* and *importance* of the present study. It should also be added that the frequent inclusion of A. Isahakyan's fables in school textbooks is an important testimony to their vitality, serving as an additional indicator of the significance and contemporary relevance of this research.

The novelty of the article lies in the content-based analysis of these fables through their division into those concerning the structure of the world and those of a moral-philosophical character—supplementing the more general and literary-historical analyses that have prevailed in literary scholarship until now. For this purpose, *the methods* of historical-comparative, textual, and structural analysis have been applied. The

conclusion is that the fable, as a literary genre, attracted A. Isahakyan throughout his creative activity. Through the simplicity of the fable, he sought to convey to his reader, in the most accessible manner, the essential and eternal truths that reveal the meaning of life.

ЛУСИНЕ ВАРДАНЯН

Кандидат филологических наук

Институт литературы им. М. Абеяна НАН РА

lusinevardanyan@litinst.sci.am

ORCID iD: 0009-0001-9731-7033

БАСНИ АВЕТИКА ИСААКЯНА

Ключевые слова: стихотворная басня, Аветик Исаакян, Аракел Багигишци, Фрик, Средневековье.

Аннотация

В статье проанализированы прозаические и стихотворные басни Аветика Исаакяна, которые он публиковал на протяжении всей своей творческой жизни, в завершении вновь обращаясь к фольклорному образу баснописца, тем самым ещё раз подчёркивая значимость данного литературного вида для него. Басни, заимствованные из Священного Писания, из армянских средневековых баснописцев, в частности Вардана Айгекци, либо вообще из армянских книжников, под пером Исаакяна подверглись своеобразной художественной переработке, а их целостное рассмотрение с формульной точностью раскрывает мировоззрение писателя, его представления о миропорядке, государственном управлении или жизни в целом. Указанные обстоятельства и обуславливают *важность* и *актуальность* работы. Добавим также, что важным свидетельством жизнеспособности басен А. Исаакяна является их частое включение в школьные учебники, что служит дополнительным показателем значимости и современности данного исследования.

Научная новизна статьи заключается в их содержательном анализе с разделением на басни, относящиеся к проблематике миропорядка, и басни нравственно-философского характера — в дополнение к существовавшим до сих пор в литературоведении более общим и литературно-

историческим подходам. С этой целью применены историко-сравнительный, текстуальный и структурный *методы* анализа. Вывод заключается в том, что басня как литературный вид интересовала А. Исаакяна на протяжении всей его творческой деятельности. Посредством простоты басенного изложения он стремился наиболее доступным образом донести до своего читателя важнейшие и вечные истины, раскрывающие смысл жизни.

Ներածություն

Առակը՝ որպես գրական տեսակ, ծագում է գեղարվեստական գրականության ակունքներից: Նրա սահմանումը բառի ձևի մեջ է անգամ արտացոլված՝ առ+ակն (Գալստյան, 2014: 22), այսինքն՝ ակնառու, ցուցանող, ուսուցանող: Առակի կենսունակության մեկ այլ խորհրդանիշ է միջնադարում նրա տարողունակությունը, քանի որ գրական այս տեսակն իր մեջ էր ներառում հանելուկն ու երբեմն նաև հեքիաթը, մասնավորապես՝ կենդանապատումը:

Առակի պատմությունն իր ուրույն դրսևորումն ունի թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրական ավանդույթում: Եզոպոսից սկիզբ առնող այս ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ այնպիսի վիթխարի դրսևորումներ է ունեցել, ինչպիսիք Մխիթար Գոշի (ԺԲ. դար) և Վարդան Այգեկցու (ԺԳ. դար) առակներն էին: ԺԲ. դարի մեկ այլ նշանավոր մատենագիր՝ Ս. Ներսես Շնորհալի հայրապետը, նյութը վերցնելով Ս. Գրքից, առակներ ու հանելուկներ էր գրում, որպեսզի ժողովուրդը դրանք գործածեր գինարբուքների և հարսանիքների ժամանակ (Աբեղյան, 1998: 7): Սա մի վկայությունն է այդ գրվածքների ուսուցողական նպատակներով կիրառելիության: Հետագայում ևս հայ գրողներն անտարբեր չմնացին այս ժանրի նկատմամբ: Հայ նոր և նորագույն գրականությունը, Խ. Աբովյանից սկսած, իր անդրադարձներն ունեցավ առակագրությանը:

Ավետիք Իսահակյանի բազմաժանր ստեղծագործության մեջ առակը ևս իր ուրույն տեղն ունի: Այն պահպանել է միջնադարից, մասնավորապես Վարդան Այգեկցուց եկող գրական ավանդույթը, և հաճախ սոցիալական բովանդակության նրա առակները երգիծական են, կամ դրության կոմիզմն է իշխում պատումի մեջ: Իսահակյանական

առականների մեկ այլ կարևոր հատկանիշը առակի միջոցով գրողի որոշ կենսական ճշմարտությունների՝ որպես բանաձևերի հայտնաբերումն է: Ինչպես նշում է գրականագետ Ավիկ Իսահակյանը՝ «Ժամանակակից արձակում նա վերականգնում է հայ միջնադարյան խոհախրատական լեզուն, առակի և զրույցի ժանրերը: Արևելյան խոհականությամբ ողողված լեզունը և զրույց-առակը սեղմությամբ, խոհերի միտումնավորությամբ շատ հարազատ ձև էր Իսահակյանի յուրահատուկ փիլիսոփայական մտածողությանը» (Իսահակյան Ավիկ, 1975: 10):

Ձևի առումով Ավ. Իսահակյանի առակները երկու մասի են բաժանվում՝ չափածո և արձակ՝ առաջին տեսակի քանակային գերակայությամբ: Առակների դիպաշարը վերցնելով Աստվածաշնչից, Աղվեսագրքից կամ Լուսմանի առակներից՝ նա դրանք դնում էր չափածո ձևի մեջ՝ այդպիսով մի նոր ազդեցիկություն և գրավչություն հաղորդելով դրանց (Ասատրյան, 1940: 77):

Բովանդակության առումով եթե առակը՝ որպես գրական տեսակ, երկու մասի բաժանենք՝ արևելյան և արևմտյան, ապա իսահակյանական առակներն առավելապես արևելյան տիպաբանության մեջ կլինեն, Արևելքի մտավոր խտացումը կներկայացնեն, սակայն ամեն ինչ այդպես միանշանակ չէ, ինչը կփորձենք ցույց տալ հընթացս:

Իսահակյանի ստեղծագործության մեջ արձակ և չափածո առակների թեմաների ողջ բազմազանությամբ հանդերձ՝ մենք կդիտարկենք դրանք ըստ երկու հայեցակետի՝ աշխարհակարգի և նրա կառավարման վերաբերյալ առակներ և խոհափիլիսոփայական առակներ:

Կատարյալ աշխարհակարգի որոնում առակների միջոցով

Արձակ

Ամենապիտանի բանը 1904 թ.
Խելացի դատավորը 1915 թ.
Առակ («Մի երիտասարդ թագավոր...»)
1920-ական թվականներ
Ամենատես աչքը - 1927-1929 թթ.

Չափածո

Առակ (Աստվածաշնչից) 1906 թ.
Գայլն ու տիսակը 1915 թ.
Վարազն ու աղվեսը 1922 թ.
Թուրքն ու Եվրոպան 1922 թ.
Թագավորից փախչողը 1935 թ.

Աշխարհակարգին վերաբերող առակները, սկսած 1904 թ. գրած առաջին՝ «Ամենապիտանի բանը» առակից, Ավետիք Իսահակ-


յանի համար դառնում են յուրօրինակ բանաձևումներ, մտավոր խտացումներ, որոնցում կարևոր դերակատարում ունի *ամենա-* գերադրական նախածանցը: Սկիզբը դեռ մեծ ճշմարտությունների որոնման շրջանն էր, որի կարճ ձևակերպումն *ամենապիտանի բանի* որոնումն էր: Այդ դեպքում ինչը, եթե ոչ առակը կարող է օգնության հասնել: Հիշենք, որ ըստ առակի տեսաբաններից մեկի՝ Պոտեբնիայի՝ առակը հարցի արագ պատասխանն է, մարդկային բարդ հարաբերություններին հարմար սխեմա, կենցաղային, քաղաքական կամ այլ խճճված հարաբերությունների բացահայտման և ճանաչողության միջոց (Выготский, 2023: 151):

Վերադառնալով, սակայն, «Ամենապիտանի բանը» առակին, որը նախ տպագրվել է «Հասկեր» ամսագրում՝ «Ամենապետքական բանն աշխարհում» վերնագրով: Հետագայում Իսահակյանն ավելացրել է «Հայկական առակ» ենթախորագիրը: Հեքիաթի սկսվածք ունեցող և իր շատ հատկանիշներով ևս հեքիաթի ժանրին հարող այս առակի (պատահական չէ, որ այն ընդգրկված է եղել նաև հեքիաթների մեջ, տե՛ս ԵԺIII, 1975: 257-259) հերոսները փորձում են հայտնաբերել կյանքի համար ամենապիտանին, ամենից անհրաժեշտը, որի համար անցնում են իրենց բաժին փորձությունների ճանապարհը: Ի դեպ, ճանապարհի արքետիպն այս ստեղծագործությունը կրկին տանում է դեպի հեքիաթի ժանրը (Кэмоделл, 2025: 61):

Եվ այսպես՝ առակն սկսվում է «Ժամանակով Արևելքի մի հրաշագեղ աշխարհում» տեղորոշմամբ, սակայն հերոսներին սպասվում է ճանապարհի փորձությունը, որպեսզի վերադարձին գտնեն ինչ-ինչ հարցերի պատասխաններ: Այդ հարցերի մարմնավորումը թագավորի կառուցած շտեմարանն է, որն առայժմ դատարկ է, և որը լցնելու, ասել է թե՛ հարցերի պատասխանները գտնելու համար է, որ արքայի երեք զավակները ճանապարհ են ընկնում:

Վերադառնալով՝ ավագ և միջնեկ որդիներն առաջարկում են հացով և հողով լցնել շտեմարանը: Հացը մարմնական կերակուրն է՝ ֆիզիկական գոյության գրավականը, իսկ հողը գոյության կեցավայրն է, ավելին՝ առաջին առաջարկը՝ հացը, ածանցված է երկրորդից՝ հողից: Բայց միայն երրորդ որդու առաջարկը՝ լույսն է իր մեջ պարփակում առաջին երկուսը. այն երկիմաստ է և անշուշտ, այլաբանական

իմաստ ունի, ինչն արդեն առակի ժանրային առանձնահատկությունն է: Երկիմաստ է, քանզի նախ իր ֆիզիկական իմաստով է ընկալվում և մեկնաբանվում. «Առանց լույսի հողը հաց չի ծնի, առանց լույսի հողի վրա կյանք չէր լինի» (Իսահակյան Ե, 2014: 254): Հետո պարզվում է՝ խոսքը սովորական լույսի մասին չէ, այլ *գիտության* լույսի: Ասելիքը ձեռք է բերում փոխաբերական իմաստ և դառնում այն բանաձևային սահմանումը, որ հայրն էր ուզում ստանալ՝ ամենապիտանի բանի սահմանումը: «-Ապրի՛ս գոչեց ուրախացած հայրը,- քեզ է արժանի գահն ու գայիսոնը, քանի որ լույսով և գիտությամբ պիտի լցնես թագավորությունդ և մարդկանց հոգիները» (Իսահակյան Ե, 2014: 254): Առակի բազմաձայնությունն իրականում կառավարման ձև է առաջարկում, մի ձև, որը գիտության կողքին ունի լույսը, քանի որ գիտությունն առանց լույսի կարող է խավար սփռել և դժբախտություն բերել, ինչպես բազմիցս եղել է և ցավոք, այժմ էլ լինում է մարդկության կյանքում: Ապացույցն անթիվ-անհամար ստեղծված և ստեղծվելիք մահվան զենքերն ու մրցավազքն են դրանց համար:



¹ Մեզ մնում է պարզել, թե այնուամենայնիվ ինչով պետք է լցվեր շտեմարանը: Եթե առաջին դեպքում այն կդառնար հացահատիկի շտեմարան, իսկ երկրորդ դեպքում հողով կլցվեր կամ հողը ներկայացնող նյութական իրերով, ապա լույսի գիտության դեպքում ինչո՞վ պետք է այն լցնել: Եվ այստեղ է, որ հայտնվում է լույսի պես պարզ պատասխանը՝ շտեմարանը պետք է լցնել գրքերով, դարձնել այն գրադարան, գրքերի շտեմարան, որոնց մեջ է լույսի գիտությունը: Այսպիսով՝ այս առակն իր ենթիմաստում դառնում է հայ գրականության մեջ եղած գրքի պատմություն ներկայացնող ստեղծագործությունների շարքին պատկանող մի բան՝ գրադարանի պատմություն: Այդպիսիք են Դերենիկ Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց»-ը, Վիգեն Խեչումյանի ստեղծագործությունները գիրք ստեղծողների մասին, Հովհաննես Ղուկասյանի «Ոսկան Երևանցի»-ն և այլն:

Առակը քսանինամյա բանաստեղծի՝ երջանիկ աշխարհի պատկերացումն էր: Բայց դրանից հետո նա՝ ինքը, իր հերոսների պես կարծես շարունակում է որոնել աշխարհի ամենապիտանի բանը, որը մենք թարգմանում ենք որպես աշխարհի ճշմարիտ կառավարման կարգ՝ երջանիկ աշխարհի ստեղծելու հնարավորություն, և առակները պարզորոշ ցույց են տալիս գրողի այդ որոնումների ուղին: «Ամենապիտանի բանը» առակի նախնական տարբերակում նա այդ երկիրն այսպես է տեղորոշում. «Ժամանակով, հեռավոր և *ոսկի* արևելքում մի խելացի և արդարամիտ թագավոր է եղել» (Իսահակյան ե, 2014: 763, ընդգծումը՝ Լ. Վ.): *Ոսկի*-ն նրա համար պատահական մակդիր չէր: Այն մեզ տանում է դեպի Իսահակյանի մեկ այլ գործ՝ դեպի «Ոսկի քաղաքը», որը կոչել է «Արևելքի հին գրույցներեն» ենթավերնագրով: Այս գործը նա գրել է 1912 թ., երբ Հովհ. Թումանյանն արդեն 1910 թ. գրել էր իր «Ոսկի քաղաքը» (Թումանյան, 1994: 253-262): Սա այն երազային երկիրն էր, այն ուտոպիան, որը, ինչպես Հովհ. Թումանյանն իր նույնանուն հեքիաթ-փոխադրության մեջ, այնպես էլ Ավ. Իսահակյանը փորձում էին օժտել կառավարման կատարյալ ձևերով: Արամ Ինճիկյանի վկայությամբ՝ Իսահակյանն այնքան է կարևորել այս հեքիաթը, որ մտադիր է եղել այն ընդգրկել «Ուստա Կարո» վեպի հյուսվածքում: Ահա թե ինչպես է վեպի հերոսներից մեկն այն բնութագրում. «Էդ քաղաքը չկա. դա մարդկային փափագն է, երազը, ապագայի ցանկալի աշխարհը, դա մեր երևակայության մեջն է, հեքիաթ է դա, որ ասում է, թե Հնդու աշխարհում, թե Չինու մի թագավոր է եղել...» (Իսահակյան ե, 2014, 930):

Սակայն յուրաքանչյուր ուտոպիա կարող է և իր անտիուտոպիան ունենալ, իր հակադրությունը, և Իսահակյանն ուներ այդ հակադրությունն իր իսկ գրվածքների նկատմամբ: Առակները, որոնք իրենց բանախյուսական ծագմամբ ենթադրում են փոխանցիկ սյուժեների վերարծարծումներ, հեղինակային դառնալիս հետաքրքիր են արդեն տվյալ գրողի կատարած ընտրությամբ և նորովի մեկնություններով: Արդեն նշել ենք, որ չափաժողարժնելը նոր փայլ էր հաղորդում առակների իսահակյանական մշակումներին: Սակայն կարևոր է նաև այն ընտրությունը, որ նա կատարում էր: Պետության կառավարման ձևերի որոնումը նրան տանում է նաև դեպի Աստվածաշունչը:

«Ամենապիտանի բանը» առակից հետո՝ 1906 թ., նա տպագրում է «Ժողովեցան մի օր ծառ ու ծիլ բոլոր» առակը: Ըստ Ա. Ինճիկյանի՝ այն գրված է ռուսական առաջին հեղափոխության օրերին և մերկացնում, ժխտում է ցարական միապետությունը (Ինճիկյան, 1977: 207): Առակի դիպաշարը քաղված է Աստվածաշնչի Դատավորաց գրքից (Դատ. Թ. 8-15) և կրկին թագավորի, իշխանավորի ընտրություն է պատկերում: Սակայն եթե «Ամենապիտանի բանը» հեքիաթում իսկապես արժանավորն է ընտրվում, ապա այս դեպքում ընտրությունը կանգ է առնում տատասկի վրա: Սա արդեն կառավարման բացասական կողմն է ներկայացնում, երբ իշխանավորը տատասկի նման է և ոչ թե *լույսի գիրությունը*, այլ փշերով է իշխելու մյուսների վրա:

Աշխարհի կառավարման կարգի որոնման շարքն է լրացնում 1920-ականներին գրված, սակայն իր կենդանության օրոք անտիպ մնացած մեկ այլ առակ, որտեղ արդեն երիտասարդ թագավորն է փորձում պարզել իր երկիրն արդարացի կառավարելու եղանակը, և նրա հրամանով հավաքված ամենախմաստուն ծերունիները խորհուրդ են տալիս իմանալ, թե որն է *ամենահարկավոր ժամը*, *ամենահարկավոր գործը* և *ամենահարկավոր մարդը*: Երբ թագավորն ինքը չի կարողանում գտնել այդ հարցի պատասխանը և կրկին դիմում է այդ նույն իմաստուններին, պատասխանը լինում է՝ ներկա պահը, ներկայի մեջ եղած գործը, ներկայում քեզ շրջապատող մարդիկ: Հանելուկանման այս առակը թեև արտաքուստ կրկին արևելյան կոլորիտ է ներկայացնում, սակայն արևմտյան փիլիսոփայության կրողն է, գովերգում է ներկա պահը և համապատասխանաբար ներկա գործն ու ներկա մարդուն: Այստեղ չկա Արևելքի՝ հավերժության որոնումը, այլ ներկա ժամանակի, գործնականության ու ռացիոնալիզմի գովերգ է: Եթե մի հայացք նետենք փիլիսոփայությանը, որն ընկած է այս առակի հիմքում, ապա արևմտյան մի քանի փիլիսոփայական տեսությունների՝ նախ՝ ստոիցիզմի, այնուհետև՝ էպիկուրյանների և հեդոնիստների փիլիսոփայությունների տարրեր կգտնենք նրանում (Չաքարյան, 2005: 92-100; Стоицизм, 2025):

Դրա անմիջական վկայությունը առավելապես հումորով գրված «Մի մարդ իր էջը կորցրել էր» սկսվածքով առակն է, որի եզրահանգումն այն է, թե նա, ով ուրախանալ, քեֆ անել չգիտի, նմանվում է

էջի: Սա հաճույքը գովաբանող առակ է, որի հիմքում էպիկուրյանների և հեղոնիստների փիլիսոփայությունն է ընկած: Սակայն համաձայն ենք նաև այն մտքին, որ Իսահակյանի հետաքրքրությունները փիլիսոփայական տարբեր համակարգերով բազմազան են, ինչի վկայությունը նրա օրագրային խորհրդածություններն են, և այդ խորհրդածություններում հատկապես առանձնացող արևելյան փիլիսոփայության ու Բուդդայի ուսմունքի վերաբերյալ մտքերը (Խաչատրյան, 2022: 147-148):

Անտիպ առակների շարքում մի առակ՝ «Ամենատես աչքը», դարձյալ արդարացի կառավարմանն ու աշխարհակարգին է վերաբերում: Կրկին դեպքերը տեղի են ունենում Արևելքում: Մի թագավոր, որը մեռած եղբոր փոխարեն թագավորում էր ժամանակավոր, ուզում է իրենից հետո եղբորորդու փոխարեն գահին բազմեցնել սեփական որդուն և իր ծառային հրամայում է աչքից հեռու մի տեղ սպանել մանուկ թագաժառանգին: Ծառան վերադառնում է առանց հրամանը կատարելու և հայտնում, որ այդպես էլ չգտավ այդպիսի մի վայր. ցերեկը հետևում էր արևի աչքը, գիշերը՝ լուսնի, հետո իր սեփական աչքերն էին հետևում, իսկ երբ աչքերն է փակել, խղճի աչքն է հետևել (Իսահակյան ե, 2014: 448): Սա Իսահակյանի հիշեցում-զգուշացումն է կառավարողներին, որ որևէ ոճի անհնար է թաքցնել ամենատես աչքից, և ոչինչ, վերջին հաշվով, թաքուն և անտես չի մնալու:

Այսօր առավել քան արդիական է «Թուրքն ու Եվրոպան» առակը, որում, վերնագրից բացի, այլ տեղ թուրքի և Եվրոպայի անունը չի հիշատակվում, և «առակս ի՞նչ կցուցանե»-ի դերը կատարում է հենց վերնագիրը: Այսինքն՝ այն ամբողջովին այլաբանական է, և միայն «Ֆիրման» եզրն է հուշում, որ գործ ունենք սուլթանական Թուրքիայի հետ (ինչպես գիտենք՝ ֆիրմանը սուլթանական հրամանն է): Դիպաշարը հետևյալն է՝ մի մարդ, որը, ում ուզում, ծեծում էր, հայտնվում է դատարանում, և երբ դատավորը նրանից պատասխան է պահանջում, պարզվում է՝ ըստ իրեն՝ նա թույլատրող հրաման՝ ֆիրման, ունի թագավորից: Իրականում այդ, այսպես կոչված, հրամանը հարյուրանոց ու հազարանոց թղթադրամներ են, որոնք կարող են լռեցնել անգամ աշխարհի «ամենաարդար» դատավորին: Այս առավել քան թափանցիկ ակնարկը, որն այսօր էլ, ցավոք, արդիական է, լավագույնս

կարող էր հայտնվել առակի ժանրի միջոցով: Ուշադրություն դարձնենք նաև հրատարակման տարեթվին. առակը լույս է տեսել 1922 թ. Վենետիկում (Իսահակյան գ, 2014, 295), երբ արդեն չկար Հայաստանի Առաջին Հանրապետությունը, իսկ Օսմանյան Թուրքիան, Եվրոպայի հովանավորությամբ, վերագտել էր իրեն Թուրքիայի Հանրապետության ապահով պատյանում: Մինչդեռ 1912 թ.՝ դեռ Կ. Պոլսում, նա սեփական ազգի ճակատագրով էր զգացել իրականությունը, երբ գրել էր իր «Ողբում եմ» բանաստեղծությունը և «առաջիններից մեկը գիտակցել, որ վտանգված է հայ մարդու գոյությունը Թուրքիայում» (Իսահակյան Ավիկ, 1987: 866): Եվ այժմ՝ 10 տարի անց, եկել էր այդ դառը իրականությունն առակի այլաբանությամբ հեզնելու պահը:

Աշխարհակարգի թեմատիկայի մեջ են «Վարազն ու աղվեսը», «Կյանքից թանկ բանը», «Գայլն ու սոխակը»: Առաջինը խաղաղության մեջ պատերազմի պատրաստվելու և գուցե դրանով պատերազմը կանխելու մասին է: Վարազը զենքերն է պատրաստում և աղվեսի հեզնանքին, թե խաղաղ ժամանակ ինչու է դրանով զբաղված, պատասխանում է, որ պատերազմելու պատրաստ լինելն է խաղաղության գինը:

Գիտցի՛ր, որ ժանգն է ծնել պատերազմ,

Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի

Թշնամին նվազ ախորժակ ունի: (Իսահակյան գ, 2014: 90)

«Կյանքից թանկ բանը» առակի վիրավոր աղավնու համար կյանքից թանկ են իր թևերը, ասել է թե՛ իր ազատ ճախրելու, իմա՛ ստեղծագործելու հնարավորությունը: Իսկ «Գայլն ու սոխակը» առակում գայլի ճանկերում հայտնված սոխակի կոկորդից չեն կարող ներդաշնակ հնչյուններ դուրս գալ, քանզի միայն ազատության մեջ է ստեղծագործողն ստեղծագործում: Երկու առակն էլ կատարյալ աշխարհակարգի որոնում են. նախ ստրուկ աշխարհի վերափոխմանն անհրաժեշտ են ազատությունը կյանքից վեր դասող մարդիկ, երկրորդ՝ միայն ազատության մեջ մարդը կարող է լիարժեք լինել, ներդաշնակ և ստեղծագործ լինել:

Խորհրդանշական է նաև «Թագավորից փախչողը» առակը: Այս դեպքում չի գործում «Եթե փախչում է, ուրեմն մեղավոր է» իրավաբանական արտահայտությունը: Մարդը նախօրոք փախչում է՝ վա-

խենալով թագավորի անարդար վերաբերմունքից, որ կարող է ցուցաբերվել իր հանդեպ. ահա թե ինչպիսի աշխարհակարգ է հաստատված երկրիս վրա (տե՛ս Իսահակյան գ, 2014: 110):

Աշխարհակարգին և ճշգրիտ կառավարմանն է վերաբերվում նաև «Խելացի դատավորը» առակը, որը հնարամիտ դատավորների մասին պատումների շարքից է: Այդպիսիք կարողանում են գլուխ հանել ամենախճճված իրավիճակներից և արդարություն վերահաստատել ամենաանելանելի թվացող գործերում: Դատավորի կերպարին նա անդրադարձել է նաև իր այլ ստեղծագործություններում, հիշենք հենց միայն արդար դատավորի մասին պատմող «Ուշինարա» (1926 թ.) լեգենդը, որտեղ Ուշինարան պատրաստ է իր մարմնով փոխարինելու իրեն ապաստանած աղավնուն: Ի դեպ, այսպիսի առնչությունները հենց իր՝ հեղինակի ստեղծագործությունների միջև գալիս են հաստատելու Լև Վիգոտսկու՝ առակի տեսության վերաբերյալ այն դիտարկումը, որ այս ժանրի երկերը կարող են հեղինակի ողջ ստեղծագործական աշխարհի կառուցվածքային ցուցիչը դառնալ (Выготский, 2023. 150):

Խոհափիլիսոփայական առակներ

Չափածո

Հաճույքն ու մահը
Արջն ու օձը
Կաքավն ու աղվեսը
Աղքատն ու քարավանը

Արձակ

Աղվեսն ու նապաստակը
Ահմեդի ուղտը
Աշխարհի դառնությունը
«Այդ ոչինչ ես եմ»

Ավ. Իսահակյանի խոհափիլիսոփայական առակների շարքը բացում է մի խորիմաստ ստեղծագործություն, որը նա վերցրել է «Հայսմավուրքից» և կոչել «Հաճույքն ու մահը»: Առակը միջնադարում մշակել են Ֆրիկը, այնուհետև Առաքել Բաղիշեցին, սակայն բուն տեքստը հիշատակվում է յոթերորդ դարից (Անթապեան, 1979, 25): Այն կոչվել է «Բարադամի եւ Յովասափու պատմութիւնը» և իրենից ներկայացնում է քրիստոնեության դարձի մի պատմություն, որում նշանակալից դեր ունեն առակները: Բարադամը՝ մի իմաստուն ծերու-

նի, թագավորի որդուն՝ Յովասափին, քրիստոնյա դարձնելու նպատակով զանազան առակներ է պատմում, որոնցից մեկն էլ սա է:

Այդ առակում կյանքն ու մահը պատկերված են այլաբանորեն և մարդուն մահվան սարսափներից փրկողը, ավելի ճիշտ՝ այդ մասին մոռացնողը հաճույքներն են: Առակի դիպաշարն այսպիսին է. գազանից փախչող մարդը պատսպարվում է մի խոր գուբի մեջ՝ կառչելով այդ գուբի եզրին աճած թփից: Սակայն շուտով նկատում է, որ երկու մուկ՝ սև և սպիտակ, կրծում են այդ թուփը, որից ինքը կառչած է, իսկ երբ ներքև է նայում, տեսնում է կրակ ժայթքող մի վիշապ: Կրունկներն էլ խայթում են իծեր: Եվ հանկարծ նկատում է, որ այն բույսից, որից ինքը կառչած է, մեղրահամ հյութ է ծորում: Մարդն սկսում է ըմպել այդ հյութը՝ մոռանալով իրեն դարանակալած բոլոր վտանգները: Այնուհետև Իսահակյանն իր ընթերցողին մեկնաբանում է այս առակի խորհրդանիշները, ինչպես Բարադամը մեկնաբանում է դրանք արքայազն Հովասափին, որին ցանկանում էր քրիստոնյա դարձնել: Մարդն աշխարհում նման է անդունդի պոնկից կախվածի, վերևում նրան սպասում է ամեհի գազանը՝ կարիքը, ներքևում՝ վիշապի պես մահ, գերեզման, մութ գուբը անելք աշխարհն է իր անցողիկ ժամանակով. խորհրդանիշը սև և սպիտակ մկներն են՝ գիշերն ու ցերեկը, որոնք հերթով կրծում են կյանքի թելերը: Եվ վերջապես՝ իծերի կծիկը անհամար ցավերն ու հիվանդություններն են, որոնք թունավորում են մարդու կյանքը: Եվ թուփը ունայն կյանքի խորհրդանիշն է, որից ծորացող մեղրը հաճույքն է՝ այն կարճատև մոռացությունը, որով մարդն անցկացնում է իր կյանքը:

Եթե փորձենք մի շղթայի մեջ դիտել Ավ. Իսահակյանի առակները, ապա այս առակի հետ երկխոսության կամ վերոնշյալ հակադրության մեջ կտեսնենք «Աշխարհի դառնությունը» առակը (գրվել է նախորդից 8 տարի հետո՝ 2018 թ.): Առակի հերոսը մահվանից հետո իր կատարած բարի գործերի շնորհիվ հայտնվել է դրախտում, սակայն բերանը լի է այս աշխարհի դառնությամբ, և ոչինչ չի փրկում նրան այդ դառնությունից, նույնիսկ՝ Աստծուն հաճո պտուղները: Պարզ է, որ անգամ հաճույքները չեն ազատել այդ մարդուն աշխարհի տված դառնությունից: Բանաստեղծը թեական է թողնում հարցի պատասխանը, թե արդյոք անցա՞վ նրա քիմքի դառնությունը, որ

տվել էր մարդկային աշխարհը (Իսահակյան Ե, 2014: 265): Խորհրդանշական է այս առակի գրության թվականը. այն գրվել է 1918 թ., երբ մարդկությունը հեծում էր Առաջին համաշխարհային պատերազմի ճիրաններում, իսկ հայ ժողովուրդը կորցրել էր մեկ ու կես միլիոն իր զավակներին, Արևմտյան Հայաստանում ապրելու իր իրավունքը: Բարդ էր իրավիճակը նաև Արևելյան Հայաստանում: Եվ Իսահակյանի խոհերը մահվան մասին դրսևորվում են նաև այս առակով (տե՛ս Մ. Զաքարյանի «Մահվան Խորհրդածությունները Ավ. Իսահակյանի Հիշատակարանում» հոդվածը): Պատումը չունի առակին բնորոշ տարրերը՝ բացի փոքրածավալ լինելուց: Սակայն Իսահակյանի առակներն այդ առումով էլ յուրահատկություն են դրսևորում՝ երբեմն չափազանց մեծ ծավալ ունենալով:

Կրկին առակի ժանրի առանձնահատկությունն է շոշափել զանազան հարաբերություններ, թեմաներ ու գաղափարներ, և որ կարևորն է՝ մարդկային արատներ ու թերություններ, այլաբանորեն, առանց կերպարի հոգեբանական ծանրաբեռնվածության: Իր առակներում Իսահակյանը պատկերում է հիմարությունը, պարծենկոտությունը, սեփական ուժերի գերազնահատումը («Երկու աքլորների վեճը») և այլն: Այսպես, «Աղվեսն ու նապաստակը» (1908 թ.) առակում աղվեսի դիմակի տակ խորամանկ, երեսպաշտ, խաբեություններով և զանազան ձեռնածություններով հարստացած կեղծ ազգասերն է, նապաստակի դիմակի տակ՝ նրա խորհուրդները լսող և նրանով հիացող դյուրահավատ աղքատ անճարակը: Առակը մարդկային հասարակությունն է ներկայացնում՝ իր արատներով, մեղքերով և անկատարություններով:

Խոհափիլիսոփայական առակներն Իսահակյանը հաճախ համեմում է ժողովրդական մեկ այլ ստեղծագործության գոհարներով՝ առաձներով: Խոսելով Ավ. Իսահակյանի առակների լեզվական արվեստի մասին՝ Արամ Ինճիկյանը գրում է. «Իսահակյանը գեղարվեստական խոսքի մեծ վարպետ է նաև առակի ժանրում. ինչպես մշակած, այնպես էլ իր ստեղծած առակները այդ ժանրի լավագույն նմուշներն են հայ գրականության մեջ. ժողովրդական ոճերն ու դարձվածքները, առաձներն ու ասացվածքները, կենդանի, պատկերավոր լեզուն, աշխույժ երկխոսությունները, էպիկական հմայիչ պատմելաձևը կազմում

են Իսահակյանի առակների գեղարվեստական առանձնահատկությունները (Ինճիկյան, 1977: 207-208):

Վերը հիշատակած «Աղվեսն ու նապաստակը» առակում գրականագետի բնութագիրը դրսևորվել է լիովի: Ահա այն առաձները, որոնք գործածված են տեքստում.

«Աշխարհը՝ դմակ, մարդը՝ դանակ, կտրե ու կեր»:

«Ձենդ տաք տեղից է գալիս»:

«Աստծու վրա հույս կապողները գերեզմանում են, դու հաստատ բանից խոսի՛ր»:

«Սարը պիտի փլի, որ ծորը լցվի»:

«Գդալով ուղտ չեն ջրի»:

«Ա՛յ ես էն մարդուն մարդ կըսեմ, որ ամեն բանի վրեն կելնի. տակը – անճարինն է»:

«Ճար ունես, քեզի գցիր աշխարհի կոնակին, հեծիր, թե չէ նա քեզ կհեծնի...»

«Էնքան որ ճնկոց ունենաս, քարն էլ քուկդ կլինի, պոպոքն էլ»:

«Ում սելին կնստես, նրա հորովելն ասա, ուրագի պես միշտ քո կողմդ տաշե. կրակը քո բաղարջի տակ միշտ քաշե»:

«Լավություն արա, ջուրը գցի՛ր, մարդը չիմանա, ձկները խո կիմանան» (Իսահակյան ե, 2014: 255-260):

Ավ. Իսահակյանի ամենից խորիմաստ առակներից մեկը «Այդ ոչինչը ես եմ» առակն է: Դասագրքերում հաճախ ընդգրկվող այս առակը, որի հիման վրա նաև Հայֆիլմ կինոստուդիան մուլտ է նկարահանել, կյանքի ունայնությունը մատնանշող և երեսպաշտությունը մերժող մի պատմություն է: Շահից հետո ոչինչն է, և քաղաքապետ իշխանի առջև խոնարհվել չցանկացող դերվիշն անվրդով արձանագրում է անժխտելի փաստը, որ ինքը հենց այդ ոչինչն է, այսինքն՝ վեր է ամեն տեսակ պաշտոնյաներից և այս ունայն աշխարհի բազում պայմանականություններից: Առակը խոսքի միջոցով, տրամաբանական մտահանգումներով բացահայտում է ճշմարտությունը և քաղաքապետ իշխանին ու նրա նմաններին ցույց տալիս երկրային իշխանության սին և ունայն լինելը:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ավ. Իսահակյանի չափածո և արձակ առակները մենք փորձեցինք դիտարկել բովանդակային երկու հարթության մեջ՝ կատարյալ աշխարհակարգի որոնման և խոհափիլիսոփայական: Այս բաժանումն ինքնին հուշում է, որ մի դեպքում դրանք ռացիոնալ, օգտավետ կառավարման և բարվոք պետության ձևի որոնումներ են, մյուս դեպքում՝ կյանքի և մահվան վերաբերյալ խորհրդածություններ առակի այլաբանության օգնությամբ: Սակայն եզրահանգման համար եթե դիմենք հենց իր՝ Վարպետի օգնությանը, ապա պիտի անդրադառնանք Իսահակյանի վերջին առակին, որն առակ է առակագրի մասին: Երգիծական երանգավորում ունեցող այս երկը, որ թվագրված է՝ «1952, հունվարի 27» և կոչվում է «Իմաստուն Գոհա (Ֆելլահ առասպելական առակախոս)», իրականում կյանքի և անցած ուղու ընդհանրացնող և խորհրդանշային գործառույթ ունի: Այն պատկերում է մտքերով տարված մի արևելցի առակախոս ծերունու, որը, «աշխարհքի բանը խորհելով» և «կամքն էլ իշուկի կամքին հանձնած», դուրս է եկել ուղիղ և հարթ ճանապարհից ու հայտնվել առապարներում: Կարծում ենք՝ սա հենց իր՝ հեղինակի եսի յուրօրինակ ընդհանրացումը կարող է լինել, նրա այլաբանական, խորհրդանշային պատկերումը: Անգամ նրան ուղղված «Իմ հին բարեկամ իմաստուն Գոհան» (Իսահակյան գ, 2014: 119) դիմելածն է այդ ինքնացման վկայությունը: Խոհերը, ի վերջո, նրան հասցրել են չոր և ամայի առապարները, որտեղ սովորական մարդու միտքը դեռ չի հասել, և առակներն են այն պարզ և հասանելի միջոցը, որ կարող են մեզ՝ հասարակ մահկանացուներին, լուր տալ այդ ոչ պարզ աշխարհից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Անթապեան Փ.**, «Պատմություն Բարադամի եւ Յովասափու». հայերէն թարգմանութեան նորահայտ մի հնագոյն ընդօրինակութեան աղթիւ, Սիոն, 1979, Յուն.-Փետ, էջ 25-28:
2. Աստվածաշունչ մատյան Հին և Նոր կտակարանների, Երևան, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, «Նոր Էջմիածին» թարգմանություն, 2020, 1501 էջ:

3. **Ասատրյան Աս.**, Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1940, 127 էջ:
4. **Գալստյան Ս.**, Դպրոցական բառակազմական բառարան, Երևան, «Չանգակ» հրատ., 2014 թ., 230 էջ:
5. **Զաքարյան Ս.**, Փիլիսոփայության պատմություն, Երևան, «Նոյյան տապան», 2005, 360 էջ:
6. **Զաքարյան Մ.**, Մահվան խորհրդածությունները Ավ. Իսահակյանի «Հիշատակարանում», Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1993, 3 (81), էջ 35-47:
7. **Թումանյան Հովհ.**, Գեղարվեստական արձակ // Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 831 էջ:
8. **Իսահակյան Ավ.**, Չափածո լեզենդներ և բալլադներ, առակներ, թարգմանություններ // Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. III, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 340 էջ:
9. **Իսահակյան Ավ.**, Արձակ էջեր // Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. V, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 992 էջ:
10. **Իսահակյան Ավիկ**, Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, «Հայաստան» հրատ., 1975, 280 էջ:
11. **Իսահակյան Ավ.**, Երկեր // Հայ դասականների գրադարան, Երևան, «Սովետական գրող», 1987, 888 էջ:
12. **Ինճիկյան Ա.**, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977, 260 էջ:
13. **Խաչատրյան Շ.**, Ավետիք Իսահակյանի օրագրերը և հուշագրությունը, Երևան, Անտարես, 2022, 192:
14. **Հայ միջնադարեան առակներ**, առաջաբանը և աշխարհաբար թարգմանությունը Արտաշէս Աբեղեանի, Երեւան, Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատ., 1998, 182 էջ:
15. **Выготский Л.**, Психология искусства, Москва, изд. АСТ, 2023, 480 стр.
16. **Кэмпбелл Дж.**, Тысячеликий герой, Санкт-Петербург, изд. «Питер», 2025, 544 стр.
17. Стоицизм, Москва, изд. «Эксмо», 2025, 128 стр.

REFERENCES

1. **Antapean P.**, «Patmoutiun Baraghami ew Yovasapu». hayeren targmanutean norahayt mi hnagoyn yndorinakutean artiv [“The Story of

- Barlaam and Josaphat”: On the Occasion of a Newly Discovered Ancient Armenian Translation Manuscript], Sion, 1979, Yown.-Pet, ej 25-28 (in Armenian).
2. Astvacashounch matyan Hin ev Nor ktakaranneri [Holly Bible], Erevan, Hayastani astvacashnchayin ynkeroutyou, «Nor Ejmiacin» targmanoutyou, 2020, 1501 ej (in Armenian).
 3. **Asatryan As.**, Avetiq Isahakyan kyanqy ev steghcagorcoutyouny [The Life and Literary Legacy of Avetik Isahakyan], Erevan, 1940, 127 ej (in Armenian).
 4. **Galstyan S.**, Dprocakan barakazmakan bararan [Schoolword-Formation Dictionary], Erevan, «Zangak» hrat., 2014 t., 230 ej (in Armenian).
 5. **Zaqaryan S.**, Pilisopayoutyan patmotyun [History of Philosophy], Erevan, «Noyyan tapan», 2005, 360 ej (in Armenian).
 6. **Zaqaryan M.**, Mahvan xorhrdacoutyounnery Av. Isahakyan «Hishatakaranoum» [Meditations on Death in Avetik Isahakyan's “Memoir”], Banber Erevani hamalsarani, Erevan, 1993, 3 (81), ej 35-47 (in Armenian).
 7. **Toumanyanyan Hovh.**, Gegharvestakan ardak // Erkeri liakatar jhoghovacu 10 hatorov [Artistic Prose // Complete Works in Ten Volumes], h 5, Erevan, HH GAA «Gitutyun» hrat., 1994, 831 ej (in Armenian).
 8. **Isahakyan Av.**, Chapaco legendner ev balladner, arakner, targmanutyunner // Erkeri liakatar jhoghovacu 14 hatorov [Verse Legends and Ballads, Fables, and Translations // Complete Works in 14 Volumes], h. III, Erevan, HH GAA «Gitoutyun» hrat., 2014, 340 ej (in Armenian).
 9. **Isahakyan Av.**, Ardak ejer // Erkeri liakatar jhoghovacu 14 hatorov [Prose Pages // Complete Works in 14 Volumes], h. V, Erevan, HH GAA «Gitutyun» hrat., 2014, 992 ej (in Armenian).
 10. **Isahakyan Avik**, Avetiq Isahakyani ardaky [Avetik Isahakyan's Prose], Erevan, «Hayastan» hrat., 1975, 280 ej (in Armenian).
 11. **Isahakyan Av.**, Erker // Hay dasakanneri gradaran [Works // Library of Armenian Classics], Erevan, «Sovetakan grogh», 1987, 888 ej (in Armenian).
 12. **Intchikyan A.**, Avetiq Isahakyan [Avetik Isahakyan], Erevan, «Sovetakan grogh» hrat., 1977, 260 ej (in Armenian).

13. **Xachatryan Sh.**, Avetiq Isahakyani oragrery ev hushagrutyuny [Avetik Isahakyan's Diaries and Memoirs], Erevan, Antares, 2022, 192 (in Armenian):
14. Hay mijnadarean arakner [Medieval Armenian Fables], arajabany ev ashxarhabar targmanutyuny Artashes Abegheani, Erevan, Grakanutean ev arvesti tangarani hrat., 1998, 182 ej (in Armenian).
15. **Vygotskij L.**, Psihologija iskusstva [The Psychology of Art], Moskva, izd. AST, 2023, 480 str (in Russian).
16. **Kjempbell Dzh.**, Tysjachelikij geroj [The Hero with a Thousand Faces], Sankt-Peterburg, izd. «Piter», 2025, 544 str (in Russian).
17. **Stoicizm** [Stoicism], Moskva, izd. «Jeksmo», 2025, 128 str (in Russian).